

Ձեր ապաստանի հայցը

Տեղեկատվություն ապաստանի ընդհանուր
ընթացակարգի վերաբերյալ

Ինչո՞ւ է տրվում այս բրոշյուրը

Դուք կամենում եք ապաստան խնդրել Նիդերլանդներում: Ապաստան նշանակում է՝ պաշտպանություն մեկ այլ երկրում այն մարդկանց համար, ովքեր իրենց սեփական երկրում չունեն պաշտպանություն և անվտանգ չեն ապրում:

Եր դուք ապաստանի հայց եք ներկայացնում, ապա պաշտոնապես դիմում եք Նիդերլանդների իշխանությանը՝ բնակության կարգավիճակ ստանալու համար: Այս կարգավիճակն անհրաժեշտ է ձեզ՝ Նիդերլանդներում բնակվելու իրավունք ունենալու համար: Ապաստանի հայցը ներկայացնելուց հետո սկսվում է ապաստանի ընթացակարգը՝ իրավական մի գործընթաց, որով Նիդերլանդների իշխանությունը կքննարկի ձեր բնակության կարգավիճակ ստանալու հայցը:

Այս բրոշյուրում դուք կարող եք կարդալ, թե ինչ է տեղի ունենում այս ընթացակարգի ժամանակ: Դուք կկարդաք նաև, թե ինչ պետք է անեք (ձեր պարտականությունները) և ինչ կարող եք ակնկալել Նիդերլանդների իշխանություններից (ձեր իրավունքները):

Երբ կարող եք դուք փախստականի բնակության կարգավիճակ ստանալ

Նիդերլանդների ,Օտարերկրացիների մասին օրենքում գրված է, թե, որ պայմանների դեպքում կարող եք փախստականի բնակության կարգավիճակ ստանալ: Դուք կարող եք բնակության կարգավիճակ ստանալ, եթե հետևյալ կետերից մեկը համապատասխանում է ձեզ.

- Դուք սարսափի հիմնավոր պատճառներ ունեք ձեր երկրում ձեր ռասայի, կրոնի, ազգության, քաղաքական համոզմունքների պատճառով հետապնդվելու կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելու համար:
- Դուք ունեք սարսափի հիմնավոր պատճառներ ձեր երկրում մահապատժի կամ էկզեկուցիայի, խոշտանգման, այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի ենթարկվելու համար:
- Դուք ունեք սարսափի հիմնավոր պատճառներ, այն բանի համար, որ ձեր երկրում դուք գոհ եք դարձել կամայական բռնության զինված ընդհարումների միջոցով:
- Ձեր կինը կամ ամուսինը, զուգընկերը, հայրը, մայրը կամ անչափահաս երեխան կարճ ժամանակ առաջ Նիդերլանդներում փախստականի բնակության կարգավիճակ են ստացել

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND) որոշում է, թե դուք արդյոք բավարարում եք փախստականի բնակության կարգավիճակ ստանալու պայմաններին:

Ուշադրություն. Եթե դուք արդեն ապաստան եք խնդրել Նիդերլանդների սահմանային գոտում (օդանավակայանում կամ նավահանգստում), ձեր մուտքը Նիդերլանդներ կարող է արգելվել. դուք պաշտոնապես իրավունք չեք ունենա մուտք գործել Նիդերլանդներ: Այդ դեպքում ձեր ապաստանի գործընթացն այլ է, քան թե նկարագրված է այս գրքույկում : Այս սահմանային գոտու հետ ապաված գործընթացի համար կա մի առանձին գրքույկ:

Ի՞նչ կազմակերպությունների հետ դուք կառնչվեք



COA Centraal Orgaan opvang asielzoekers

Փախստականների ընդունելության կենտրոնական մարմինը (COA) հոգ է տանում Նիդերլանդներում փախստականների ընդունելության և ընդունելության ընթացքում ուղեկցելու համար: COA-ն հոգ է տանում, որպեսզի դուք կացարան, կերակուր ստանաք և ունենաք առողջության ապահովագրություն: Դուք կարող եք նաև դիմել COA-ին, որպեսզի օգնեն ձեզ կապ հաստատելու բժշկի հետ: COA-ն մի անկախ կազմակերպություն է և ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:



Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA) մի կազմակերպություն է, որին կարող եք դիմել հիվանդանալու դեպքում կամ առողջական ցանկացած հարցով: Ապաստան հայցողների կենտրոնացման ցանկացած բաժնում (COA) կամ Ապաստան հայցողների կենտրոնացման բաժնին մոտ (COA) գործում է Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA): GZA բաժինը ձեր համար կարող է հանդիպումներ կայացնել որևէ բժշկի օգնականի, բուժքրոջ, GZA բաժնի հերթապահ բուժօգնողի կամ տնային բժշկի հետ: Ցերեկվա կամ գիշերվա ցանկացած ժամերին դուք կարող եք զանգահարել առողջապահությանը վերաբերող հարցերով զբաղվող հերթապահ բաժին հետևյալ հեռախոսահամարով 088 112 21 12: Առողջապահությանը վերաբերող հարցերով երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ կարող եք զանգահարել նշված հեռախոսահամարով, օրինակ, եթե կարիք ունեք ստանալ ուղեգիր որևէ բժշկի/բուժմասնագետի դիմելու համար



Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնը մարդու իրավունքների մի անկախ կազմակերպություն է և ստեղծված՝ փախստականների շահերը պաշտպանելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ տեղեկություններ կտրամադրի և կբացատրի ապաստանի գործընթացի մասին, կտեղեկացնի և կօժանդակի ձեզ ապաստանի ընթացակարգի ժամանակ և կմիջնորդի այլ կազմակերպությունների հետ խնդիրներ ունենալու դեպքերում: Կենտրոնը սերտ կհամագործակցի ձեր փաստաբանի հետ: Փախստականների աջակցության կենտրոնը ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:

Raad voor Rechtsbijstand legal aid

Իրավաբանների պալատը հոգ է տանում, որպեսզի դուք ստանաք փաստաբանի օգնություն, եթե դուք այդ ծախսերը չեք կարող վճարել: Իրավաբանների պալատը

կվարձատրի ձեր փաստաբանին իր ցուցաբերած օգնության համար: Փաստաբանը չի ծառայում Իրավաբանների պալատում: Փաստաբանը անկախ մեկն է և կաջակցի ձեզ ձեր ապաստանի ընթացակարգի ողջ ընթացքում:



Immigratie- en Naturalisatiedienst
Ministerie van Veiligheid en Justitie

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND) Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: IND-ի աշխատակիցները ձեզ հետ զրույցներ կվարեն ձեր ինքնության, ազգության, ճանապարհի և ձեր երկրից մեկնելու պատճառների վերաբերյալ: Նրանք քննում են ձեր անձնական պատմությունը և ձեր երկրի իրավիճակը: Դրանից հետո նրանք որոշում են, արդյոք դուք կարող եք (ժամանակավորապես) մնալ Նիդերլանդներում թե պետք է վերադառնաք ձեր սեփական երկիր



D-ի մասնաշենքերում և COA-ի ընդունելության կենտրոններում կան **հսկիչներ**: Դուք նրանց կհանաչեք իրենց համազգեստից: Նրանց ներկայությունը ձեր անվտանգության համար է: Դուք կարող եք նաև նրանց հարցեր տալ, թե ինչն է թույլատրվում IND-ի և COA-ի մասնաշենքերում և տարածքներում ինչը ոչ: Այդ հսկիչները ոչ մի ազդեցություն չունեն ձեր ապաստանի դիմումի որոշման հարցում:



Dienst Terugkeer en Vertrek
Ministerie van Veiligheid en Justitie

Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V) Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: Եթե ձեր ապաստանի դիմումը մերժվի IND-ի կողմից, ապա DT&V-ի աշխատակիցը ձեզ կ օգնի կազմակերպելու վերադարձ դեպի ձեր երկիր:



Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM) անկախ կազմակերպություն է, որն օժանդակում է աշխարհում սիմված գաղթականներին: IOM-ը կարող է օգնել, երբ դուք կամենում եք ինքնուրույն լքել Նիդերլանդները: IOM-ը տալիս է գործնական տեղեկություն վերադարձի և վերաինտեգրման վերաբերյալ և ուղեկցում է ձեզ Նիդերլանդներից ձեր մեկնումը կարգավորելու ժամանակ: Դուք կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակցին կամ ձեր փաստաբանին այս հարցում ձեզ օգնելու համար:

Բնչ է ակնկալվում ձեզին

Կարևոր է, որ դուք ընթացակարգի ժամանակ տաք բացատրություններ, որոնք հիմնավորում են ձեր ապաստանի դիմումի պատճառները: Ձեզին ակնկալվում է նաև, որ ապացույցի բոլոր միջոցները, որոնք դուք ունեք կամ կարող եք ձեռք բերել (ինչպես օրինակ՝ ձեր փաստաթղթերը կամ նամակներ, որոնք սատարում են ձեր բացատրություններին), ցույց տաք IND-ին:

Եթե կան անձնական հանգամանքներ, որոնք պետք է IND-ն հաշվի առնի, ապա կարող եք դրանք ներկայացնել: IND-ն կարող է այդ ժամանակ միջոցներ կիրառել, օրինակ՝ գրույցներ կամ COA-ի կացարանում գտնվելու ժամանակ: IND-ն փորձում է ձեզ հնարավորինս ճիշտ օգնել:

Ապաստանի ընթացակարգը օր առ օր

IND-ի հետ ձեր պայմանավորվածության օրը դուք պետք է ներկայանաք IND-ի գրասենյակ: Այստեղ սկսվում է ապաստանի ընթացակարգը:

Ապաստանի ընթացակարգի ժամանակ դուք հավանաբար կշարունակեք մնալ նույն ընդունելության կետում, որտեղ մնացել էիք ընթացակարգին նախապատրաստվելիս: Երբեմն, հանգստի կամ նախապատրաստական ժամկետից հետո, ձեզ կարող են տեղափոխել այլ ընդունելության կետ, որն ավելի մոտ է IND-ի գրասենյակին:

IND-ի հետ հարցազրույցների համար ձեզ կտանեն IND-ի գրասենյակ, բացառությամբ՝ երբ հեռավորությունը քիչ է, և դուք կարող եք ուղևորվել գնալ:

Ստորև դուք կարող եք օր առ օր կարդալ, թե ինչպես է ընթանում ձեր ապաստանի ընթացակարգը:

Օր 1. առաջին հարցազրույց

IND-ի աշխատակցի հետ դուք պաշտոնական հարցազրույց եք ունենում ձեր ինքնության, ազգության, ճամփորդության ուղու վերաբերյալ: Այս գրույցը կոչվում է առաջին հարցազրույց : Այս գրույցի ժամանակ դեռ հարցեր չեն տրվի ձեր ապաստանի հայցի պատճառների վերաբերյալ: Դա տեղի կունենա IND-ի աշխատակցի հետ մեկ այլ գրույցի ժամանակ (տե՛ս օր 3):

IND-ի աշխատակիցը ձեզ շատ մանրակրկիտ հարցեր կտա ձեր ինքնության, ազգության, ճամփորդության ուղու վերաբերյալ հստակ տվյալներ ստանալու համար, բայց նաև ստուգելու համար, թե արդյոք դուք ճիշտ եք ասում: Ապաստանի դիմումի ընդունման հարցազրույց ունենալու դեպքում IND-ի աշխատակիցը կստուգի ձեր այդ օրվա ներկայացրած տվյալները և կտա լրացուցիչ հարցեր: Հնարավորինս լավ պատրաստվեք առաջին հարցազրույց տալու համար: Դուք մեկ անգամ եք հնարավորություն ստանում հասկանալի և լիարժեք կերպով բացատրելու, թե ով եք դուք:

Միշտ ներկայացրեք ձեր իսկական տվյալները և ոչ թե կեղծ (ճամփորդական) փաստաթղթերում նշված տվյալները: Եթե կեղծանուն եք գործածել, դա նույնպես հայտնեք: Մա կարևոր է, քանի որ պետք է ստուգվի ձեր փաստաթղթերի և ձեր պատմության իսկությունը: Եթե IND-ն պարզի, որ ձեր պատմությունը ճիշտ չէ, և ձեր փաստաթղթերը իսկական չեն, ապա դա կարող է բացասական հետևանքներ ունենալ ձեր ապաստանի դիմումի համար: Եթե դուք կամենում եք, կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին ներկա գտնվել առաջին հարցազրույցի ժամանակ:

IND-ի հետ հարցազրույցների ժամանակ ներկա է գտնվում թարգմանիչ: IND-ի աշխատակիցը հարցերը տալիս է միդերլանդերեն: Թարգմանիչն այն թարգմանում է ձեզ համար հասկանալի լեզվով: Թարգմանիչը թարգմանում է ձեր պատասխանները միդերլանդերեն: Թարգմանիչն անկախ է և ձեր ապաստանի հայցի որոշման վրա ազդեցություն չունի: Եթե դուք և թարգմանիչն իրար լավ չհասկանաք, ապա այդ մասին անմիջապես ասեք: Այդ ժամանակ IND-ի կողմից մեկ այլ թարգմանիչ կնշանակվի: Կարևոր է, որ թյուր տեղեկություններ չգրանցվեն հարցերը լավ չհասկանալու պատճառով:

Եթե դուք ձեր ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ հետ եք դիմում ներկայացրել ապաստանի համար, ապա ձեզին ամեն մեկն առանձին հարցազրույց է վարում IND-ի աշխատակցի հետ: Եթե դուք ունեք 15 տարեկան կամ դրանից ավելի մեծ երեխաներ, ապա նրանց հետ նույնպես առանձին գրույց են վարում : Դուք (ձեր փաստաբանի միջոցով) կստանաք առաջին հարցազրույցի զեկուցագիր:

Օր 2. մանրագնին հարցազրույցի նախապատրաստում

Ձեր փաստաբանը ձեզ հետ կքննարկի առաջին հարցազրույցի զեկուցագիրը: Փաստաբանին սրա համար աշխատասենյակ է տրամադրվում IND-ի գրասենյակում: Այս հարցազրույցի ընթացքում թարգմանիչն օգնում է թարգմանել այն ամենը, ինչ ասում եք դուք և փաստաբանը: Եթե զեկուցագրում որևէ բան բացակայում է կամ ճիշտ գրանցված չէ, ապա ձեր փաստաբանը այդ մասին նամակով հայտնում է IND-ին: Ձեր փաստաբանը ձեզ նախապատրաստում է IND-ի հետ կայանալիք երկրորդ գրույցին:

Օր 3. մանրագնին հարցազրույց

IND-ի աշխատակցի հետ երկրորդ հարցազրույցը կոչվում է մանրագնին լսում: Այս գրույցի ժամանակ դուք կարող եք պատմել ապաստանի հայցի ձեր դրդապատճառների մասին: IND-ի աշխատակիցը հարցազրույցի ընթացքում ձեզ նաև հարցեր կտա: Այս հարցազրույցը նույնպես տեղի է ունենում IND-ի գրասենյակում: Կարևոր է, որ դուք ասեք այն ամենը, որով փաստվում է, որ դուք պաշտպանության կարիք ունեք: Եղեք անկեղծ, ներկայացրեք լիարժեք և հասկանալի կերպով, թե ինչ է ձեզ հետ կատարվել, և ինչու չեք կարող պաշտպանություն գտնել ձեր երկրում: Երբ դուք որևէ իրադարձություն հստակ չեք կարողանում մտաբերել, ապա այդ մասին հայտնեք IND-ի աշխատակցին:

IND-ի աշխատակիցը տեղյակ է ձեր երկրի ընդհանուր իրավիճակին: Կարևոր է, որ դուք պատմեք ձեր իսկ վիճակի մասին՝ թե ինչու դուք՝ անձամբ ունեք պաշտպանության կարիք: Պատմեք որքան հնարավոր է տեղին մանրամասներ: Եթե դուք սպիներ, ֆիզիկական կամ հոգեկան զանգատներ ունեք, որոնք կապված են ձեր ապաստանի դիմումի պատճառների հետ, կարևոր է, որ այդ մասին ասեք IND-ի աշխատակցին: Այդ դեպքում IND-ն կարող է որոշել և առաջարկել դատաբժշկական հետազոտություն կատարել, եթե IND-ն դա էական համարի ձեր դիմումի քննարկման համար: Դուք կարող եք նման հետազոտություն կատարել նաև ձեր սեփական նախաձեռնությամբ և սեփական ծախսերով: Այս գրույցի ժամանակ նույնպես թարգմանիչ է ներկա գտնվում: Եթե դուք կամենում եք, կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին մարազնին լսման ժամանակ ներկա գտնվելու համար: Մանազնին հարցազրույցի զեկուցագիրը կստանաք ձեր փաստաթղթի միջոցով:

Օր 4. մանրագնի հարցազրույցի քննարկում

Ձեր փաստաթանը ձեզ հետ կքննարկի մանրագնի հարցազրույցի զեկուցագիրը: Այս գրույցի ժամանակ նույնպես թարգմանիչն օգնում է թարգմանելու այն ամենն, ինչ ասում եք դուք և փաստաթանը: Երբ զեկուցագրում որևէ բան բացակայում է կամ ճիշտ գրանցված չէ, ապա ձեր փաստաթանն այդ մասին նամակով հայտնում է IND-ին:

Օր 5. նախնական որոշում

IND-ն քննարկում է՝ արդյոք դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Այս քննարկման արդյունքը որոշում է, թե հետագայում ինչպես կշարունակվի ձեր ապաստանի ընթացակարգը: Կա երեք հնարավորություն.

1. Դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ստանում եք (փաստաթանի միջոցով) IND-ից նամակ (վճիռ), որում նշվում է, որ ձեր ապաստանի դիմումը բավարարված է: Դուք իրավունք ունեք (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Ձեր փաստաթանը բացատրում է, թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար:
2. IND-ին շատ ժամանակ է հարկավոր քննության համար և այն չի կարող ութ օրվա ընթացքում որոշում կայացնել ձեր ապաստանի հայցի վերաբերյալ: IND-ն կշարունակի քննարկել ձեր ապաստանի հայցը երկարացված ընթացակարգով: Ձեր ապաստանի հայցի վերաբերյալ որոշումը կհետևի ավելի ուշ: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի երկարացված այս ընթացակարգի մասին:
3. IND-ն որոշում է կայացնում, որ դուք չեք բավարարում փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք (փաստաթանի միջոցով) նամակ եք ստանում IND-ից, որում նշվում է, որ IND-ն ծրագրում է (այսինքն՝ մտադիր է) մերժել ձեր ապաստանի հայցը: Այս նամակում գրված են նաև այս նախնական մերժման պատճառները և թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար: Ձեր փաստաթանը ձեզ հետ քննարկում է այս նամակը:

Օր 6. կարծիք

Եթե IND-ն նախատեսել է ձեր ապաստանի դիմումը մերժել, դուք քննարկում եք այդ նախնական որոշումը փաստաթանի հետ: Այնուհետև ձեր փաստաթանը կարող է IND-ին գրավոր կարծիք ուղարկել: Սա մի նամակ է, որով դուք պաշտոնապես արձագանքում եք IND-ի նախնական որոշմանը և հայտնում եք, թե ինչու դուք համաձայն չեք դրա հետ:

Օր 7 և 8. որոշում

Ձեր արձագանքը (կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն քննարկում է, թե արդյոք պետք է նախնական որոշումը փոփոխել: Այս քննության արդյունքը կրկին որոշիչ է, թե ինչպես կշարունակվի ձեր ապաստանի ընթացակարգը: Դուք ստանում եք (փաստաթանի միջոցով) նամակ, որում IND-ն հայտնում է այս քննարկման արդյունքը: Ձեր փաստաթանը բացատրում է, թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար: Կա երեք հնարավորություն.

1. Ձեր արձագանքը (կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն գտնում է, որ դուք, այնուամենայնիվ, բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ստանում եք (փաստաթանի միջոցով) IND-ից նամակ (վճիռ), որում գրված է, որ ձեր ապաստանի դիմումը բավարարված է: Դուք իրավունք ունեք (ժամանակավորապես) բնակվել Նիդերլանդներում: Ձեր փաստաթանը բացատրում է, թե ինչ հետևանքներ սա կունենա ձեզ համար:
2. IND-ին ավելի շատ ժամանակ է հարկավոր քննության համար և այն չի կարող ութ օրվա ընթացքում որոշում կայացնել ձեր ապաստանի հայցի վերաբերյալ: IND-ն կշարունակի քննարկել ձեր ապաստանի հայցը երկարացված ընթացակարգով: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի երկարացված այս ընթացակարգի մասին:
3. IND-ն շարունակում է գտնել, որ դուք չեք բավարարում փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ստանում եք (փաստաթանի միջոցով) IND-ից նամակ (վճիռ), որում գրված է, որ IND-ն պատրաստվում է ձեր ապաստանի դիմումը մերժել: Այս նամակի հետ միասին դուք նաև կստանաք առանձին մի տեղեկություն մերժման հետևանքի վերաբերյալ, այն մասին թե դուք տվյալ դեպքում մերժման դեմ ինչ կարող եք անել, ինչպես նաև տեղեկություն վերադարձի հնարավորությունների մասին: Այս որոշումը կոչվում է մտադրություն, որում գրված է նաև մերժման պատճառները, և թե ինչ հետևանքներ կունենա այն ձեզ համար: Ձեր փաստաթանը ձեզ հետ կքննարկի այդ որոշումը:

Ձեր դիմումը հետ վերցնելը

Ցանկացած պահի դուք կարող եք ձեր դիմումը հետ վերցնել: Այս դեպքում խորհուրդ է տրվում կապ հաստատել փաստաբանի հետ կամ անմիջապես դիմել IND-ին: Եթե դուք հետ վերցնեք ձեր դիմումը, ապա, որպես հետևանք, դուք այլևս չեք կարող բնակվել Նիդերլանդներում, եթե, իհարկե, չունեք կացության իրավունք այլ պատճառով: Դիմումը հետ վերցնելուց հետո դուք այլևս կացության իրավունք չունեք: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում ձեր վրա կարող է դրվել այս երկիր մուտք գործելու արգելք/մուտքի արգելք: Այդ պատճառով դուք չեք կարող վերադառնալ կամ մնալ Եվրոպական մի շարք երկրներում: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում էլ հնարավորություն ունեք նորից դիմել ապաստան ստանալու համար, եթե նույնիսկ ձեր վրա դրված մուտքի արգելքը դեռ ուժի մեջ է:

Ապաստանի ընթացակարգից հետո

Ապաստանի ընդհանուր ընթացակարգից հետո դուք կտեղափոխվեք COA-ի մեկ այլ կացարան:

Եթե IND-ն բավարարում է ձեր ապաստանի հայցը, ապա դուք իրավունք եք ստանում (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Դուք ստանում եք կացության կարգավիճակ, աշխատելու թույլտվություն և, հնարավոր է Նիդերլանդներ կանչեք ձեր ընտանիքի անդամներին: COA-ն միջնորդում է նաև բնակարան փնտրելիս: COA-ի հետ հարցազրույցի ժամանակ գրի կառնվեն կարևոր տեղեկություններ ձեր կացարանային պայմանների վերաբերյալ: Այս տվյալների հիման վրա դուք կկցվեք Նիդերլանդների որևէ համայնքի: Այնուհետև այդ համայնքը ձեզ համար կփնտրի համապատասխան բնակարան: Բնակարանի այս առաջարկը մեկ անգամ է կատարվում և դուք պետք է ձեր համաձայնությունը տաք: Մինչև ձեր առանձին բնակարան ունենալը դուք իրավունք ունեք բնակվել COA-ի հատկացրած կացարանում: Ապաստանի դիմումի բավարարումից հետո IND-ն ձեզ կտեղեկացնի ձեր իրավունքների և պարտականությունների մասին: Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցները կարող են ձեզ օգնել նիդերլանդական հասարակության մեջ ինտեգրվելու հարցում: Նրանք կօգնեն ձեզ գտնելու տարբեր հաստատություններ տանող ձեր ճանապարհը, օրինակ՝ բնակարան, կրթության հնարավորություն կամ աշխատանք գտնելու համար:

Եթե IND-ն մերժում է ձեր ապաստանի դիմումը, ապա դուք կարող եք ձեր փաստաբանի հետ խորհրդակցելով բողոքարկել այս որոշումը նիդերլանդական դատարանում: Դա նշանակում է, որ դուք պաշտոնապես հայտնում եք դատավորին, որ դուք համամիտ չեք IND-ի որոշման հետ: Դուք կարող եք հայցադիմում ներկայացնել դատարան թույլտվություն խնդրել բողոքարկաման ընթացակարգի ժամանակ Նիդերլանդներում մնալու համար: Այս հարցում ձեզ կօգնի ձեր փաստաբանը: Այնուհետև դատավորը քննում է, թե արդյոք IND-ն ճիշտ է կիրառել Նիդերլանդների օրենքը ձեր ներկայացրած ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելիս: Շատ դեպքերում դուք իրավունք ունեք դատավորի վճռին սպասել Նիդերլանդներում:

Եթե IND-ն մերժում է ձեր ապաստանի դիմումը, ապա ձեզ կտեղափոխեն փախստականների մեկ այլ կենտրոն: Այնտեղ հիմնականում տրվում է 28 օր ժամանակ Նիդերլանդներից ձեր մեկնումը կազմակերպելու համար: Այդ ժամկետի ավարտից հետո դուք այլևս կացարանի իրավունք չունեք: Դուք այլևս իրավունք չունեք բնակվելու փախստականների կենտրոնում:

Դուք ինքներդ եք պատասխանատվություն կրում ձեր երկիր վերադառնալու համար: Եթե դուք նշված ժամկետում ինքնուրույն չեք մեկնում, ապա դուք ստիպողաբար եք վերադառնում ձեր երկիր:

Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V) օգնում է ձեզ ձեր մեկնումը կազմակերպելու հարցերում: IND-ի կողմից ձեր ապաստանի դիմումը մերժվելու դեպքում դուք կստանաք մեկ այլ բրոշյուր՝ ձեր երկիր վերադառնալու մասին տեղեկություններով: Եթե դուք կամավոր եք ցանկանում վերադառնալ ձեր երկիր, ապա կարող եք կապ հաստատել Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ (IOM): IOM-ը կարող է ձեզ գործնական տեղեկություններ տրամադրել և աջակցել մեկնման հարցում: Հաճախ IOM-ն ունենում է ընդունելության ժամեր փախստականների կենտրոնում: Դուք ապաստանի ընթացակարգի ավարտից հետո նույնպես կարող եք դիմել Փախստականների աջակցության կենտրոնին աջակցություն և տեղեկատվություն ստանալու համար:

Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքույկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում են պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե դա պահանջվում օրենքով: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ ձևով առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է նաև ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցել ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են օգտագործում ձեր տվյալները;
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցել ձեր տվյալները:

Ցանկանում եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք մուտք գործել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքույկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները

Հաճախ տրվող հարցեր

Ե՞րբ կկայանա իմ առաջին հարցազրույցը IND-ի հետ

Դիմում ներկայացնելուց հետո դուք առնվազն վեց օր ժամանակ կունենաք ապաստանի ընթացակարգին պատրաստվելու համար: Գործնականում դա կարող է նաև ավելի երկար տևել, մինչև տեղի կունենա IND-ի հետ ձեր առաջին հարցազրույցը: COA-ի ընդունելության կենտրոնում դուք կստանաք նամակ, որով IND-ն ձեզ հրավիրում է այս առաջին զրույցին:

Որքան ժամանակ պետք է սպասեմ IND-ի որոշմանը

Ապաստանի ընդհանուր ընթացակարգը հիմնականում տևում է ութ աշխատանքային օր: Երբեմն IND-ն չի կարողանում որոշում կայացնել ութ աշխատանքային օրվա ընթացքում, օրինակ այն պատճառով, որ դուք հիվանդացել եք ապաստանի ընթացակարգի ժամանակ: Այդ դեպքում IND-ին տրվում է վեց լրացուցիչ աշխատանքային օր ձեր ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

IND-ի գրասենյակները շաբաթ և կիրակի օրերին հիմնականում փակ են. դրանք աշխատանքային օրեր չեն: Հնարավոր է նաև, որ IND-ն որոշի ձեր ապաստանի հայցը քննարկել ապաստանի երկարացված ընթացակարգում: Այդ դեպքում առավելագույնը վեց ամիս է տևում՝ սկսած ձեր ապաստանի դիմումի ստորագրման պահից մինչև IND-ն որոշում է կայացնում ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ: Այդ պարագայում դուք ստանում եք մեկ այլ բրոշյուր ապաստանի երկարացված ընթացակարգի մասին:

Եթե IND-ն չի կարողանում վեց ամսվա ընթացքում որոշում կայացնել, ապա դուք այդ մասին կտեղեկացվեք IND-ից: Եթե IND-ն ձեր ապաստանի դիմումից հետո հաջող վեց ամիսների ընթացքում ձեզ դեռ որոշում չի ուղարկել և դուք այդ մասին լուր չեք ստացել IND-ից, ապա դուք կարող եք նամակով IND-ից պահանջել ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնել երկու շաբաթվա ընթացքում: Այս հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը: Ձեր փաստաբանի գրության հիման վրա դատավորը կարող է վճռել, որ IND-ն պետք է սույժ վճարի յուրաքանչյուր օրվա համար, քանի դեռ հայցի վերաբերյալ որոշում չի կայացվում:

Ես նախընտրում եմ իմ փախստականի պատմությունը պատմել կին աշխատակցի: Հնարավոր է դա

Նիդերլանդներում դուք չեք կարող հրաժարվել տղամարդկանց կամ կանանց հետ առօրյա կյանքում առնչվելուց: Նիդերլանդական հասարակության մեջ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներով են վերաբերվում:

Մենք սա ակնկալում ենք նաև ձեզից: Սակայն եթե դուք ցանկանում եք IND-ի կին աշխատակցի հետ խոսել ձեր ապաստանի դիմումի պատճառի մասին, ապա կարող եք այս մասին հայտնել առաջին զրույցի (IND-ի հետ հարցազրույցի) ժամանակ: Այդ դեպքում IND-ն կփորձի նաև կարգավորել, որ կին թարգմանիչ ներկա լինի մանրագրի լսման (երկրորդ հարցազրույցի) ժամանակ: Եթե նախընտրում եք ձեր պատմությունը պատմել տղամարդ աշխատակցի, ապա կարող եք նաև այդ մասին հայտնել առաջին զրույցի (IND-ի հետ հարցազրույցի) ժամանակ: Այս դեպքում IND-ն կփորձի կարգավորել, որ մանրագրի հարցազրույցի ժամանակ ներկա լինեն IND-ի տղամարդ աշխատակցի և տղամարդ թարգմանիչ:

Ինչ պետք է անեն, եթե հիվանդ եմ

Եթե դուք հիվանդ եք կամ հղի եք, ասեք այդ մասին բուժաշխատակցին՝ բժշկական խորհրդատվության համար կատարվող հետազոտման ընթացքում (տե՛ս ,Մինչ կսկսի ձեր ապաստանի ընթացակարգը բրոշյուրը): Սա շատ կարևոր է հատկապես այն դեպքում, երբ դուք այնպիսի վարակիչ հիվանդություն ունեք (կամ ենթադրում եք, որ ունեք), ինչպիսին են օրինակ՝ թոքախտը, քոսը, կամ հեպատիտ B-ն: Այն ամենն, ինչ դուք պատմում եք բուժաշխատակցին, գաղտնի է պահվում: Բուժաշխատակցին առանց ձեր թույլտվության երբեք այլ անձանց ձեր առողջության մասին տեղեկություններ չի հայտնում: Եթե դուք հիվանդանում եք ապաստանի ընթացակարգի ժամանակ, ապա ասեք այդ մասին COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին: Նրանք կարող են օգնել ձեզ ստանալու համապատասխան (բժշկական) օգնություն: Եթե դուք հիվանդանում եք IND-ի կամ ձեր փաստաբանի հետ նշանակված գրույցի օրը, ապա խնդրեք COA-ի աշխատակիցներից մեկին տեղեկացնել այդ մասին ձեր փաստաբանին կամ IND-ին:

Ունե՞ք հարցեր այս բրոշյուրը կարդալուց հետո

Դուք կարող եք այդ հարցերը տալ ձեր փաստաբանին կամ COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին

Որևէ բողոք ունե՞ք

Բողոք կազմակերպությունները, որոնք ներգրավված են ապաստանի ընթացակարգում, աշխատում են պրոֆեսիոնալ և հոգատար: Մակայն եթե դուք գտնում եք, որ որևէ կազմակերպություն ձեր նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա դուք կարող եք բողոքել: Նման հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը:

Այս տեղեկատվությունը հեռակալ կազմակերպությունների միասնական հրապարակումն է.

Centraal Orgaan opvang asielzoekers | www.coa.nl
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին
Dienst Terugkeer en Vertrek | www.dienstterugkeerenvertrek.nl
Վերադարձի և մեկնման ծառայություն
Immigratie- en Naturalisatiedienst | www.ind.nl
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
Raad voor Rechtsbijstand | www.rvr.org
Իրավական աջակցության խորհուրդ
VluchtelingenWerk Nederland | www.vluchtelingenwerk.nl
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid
www.rijksoverheid.nl

Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հոլանդերեն տարբերակը: